



**«ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍԵՐԻ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ»  
ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ**

**ՏԻՄ-ՔՉԿ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՓՈՔԻ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ  
ՄՐՑՈՒԹԱՅԻՆ**

**ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀՐԱՎԵՐ (ՀՆՀ)**

**ԽՆԴԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Արարատյան դաշտը Հայաստանի բարձրորակ ստորերկրյա բնական ջրերի ամենամեծ շտեմարանն է, որը կենսական նշանակություն ունի ոչ միայն Հայաստանի, այլև տարածաշրջանի համար: Ավազանի ջրային ռեսուրսների վատ կառավարման հետևանքով Արարատյան դաշտի շատ համայնքների համար խմելու եւ ոռոգման ջրի հասանելիությունը սահմանափակ է դարձել: Գրեթե բոլոր շահակիր կողմերը՝ համայնքները, պետական մարմինները, քաղաքացիական հասարակության կառույցներն, ընդունում են, որ Արարատյան դաշտի ջրային ռեսուրսների կառավարման համակարգը թափանցիկ չէ, հանրությունը չի մասնակցում իրենց համար կենսական նշանակություն ունեցող որոշումների կայացմանը, սակայն համոզված են, որ ջրօգտագործողներին Արարատյան դաշտի ջրային ոլորտին առնչվող որոշումների կայացման գործընթացում ներգրավելը կհանգեցնի խմելու և ոռոգման ջրի մատակարարման ծառայությունների որակյալ մատուցմանը, և կամրապնդի որոշումների կայացման լեգիտիմությունը:

Արարատյան դաշտի ստորերկրյա ջրերի պաշարների գերօգտագործման հարցը Հայաստանի կառավարության օրակարգում է: Արտեզյան ջրաշերտի կտրուկ նվազումը վկայում է այն մասին, որ Արարատյան դաշտի ստորերկրյա ջրերի արտահոսքը գերազանցում է դրանց վերականգնումը, ինդիք, որը կապված է ձկնաբուծարանների թվի ավելացման, անարդյունավետ գործընթացների, ապօրինի ջրօգտագործումների հետ կապված կոռուպցիոն դրսեւորումների, հնամաշ խողովակաշարերում ջրի հսկայական կորուստների և որոշ ջրօգտագործողների կողմից ջրի անխնա օգտագործման հետ:

«Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամը, «Ազգային ջրային համագործակցություն» ՀԿ-ն և ԵՊՀ Էկոլոգիական իրավունքի գիտաուսումնական կենտրոնը 2017թ.-ից ԱՄՆ ՄԶԳ-ի ֆինանսական աջակցությամբ իրականացնում են **«Ջրային ռեսուրսների մասնակցային և արդյունավետ օգտագործում»** ծրագիրը, որի նպատակն է խթանել Արարատյան դաշտի ջրային ռեսուրսների պատասխանատու կառավարումն ու օգտագործումը՝ հանրային մասնակցության և իրազեկման միջոցով, ինչպես նաև խթանել վարքագծի փոփոխությունները՝ ստորերկրյա ջրերի արդյունահանման կրճատումը ապահովելու

համար:

Ծրագրի շրջանակում ընտրվել են Արարատյան արտեզյան ավազանում գտնվող 12 գործընկեր համայնքներ՝ Արարատի մարզի Վեդի, Փոքր Վեդի, Բերքանուշ, Այգավան, Բուրաստան, Խաչփար համայնքները և Արմավիրի մարզի Երասխահուն, Եղեգնուտ, Գայ, Գրիբոյեդով, Ակնալիճ, Առատաշեն համայնքները:

«Ջրային ռեսուրսների մասնակցային և արդյունավետ օգտագործում» ծրագրի շրջանակներում **հայտարարվում է ՏԻՄ- ՔՀԿ համագործակցության փոքր դրամաշնորհների մրցույթ**, որոնք նախատեսված են Արարատի և Արմավիրի մարզի՝ Ծրագրի գործընկեր համայնքների կամ նրանց հետ համագործակցող ՀԿ-ների համար՝ իրականացնելու ջրային ռեսուրսների մասնակցային և արդյունավետ կառավարման/օգտագործման մոնիթորինգ՝ բարելավելու իրենց համայնքներում խմելու և ոռոգման ջրի հասանելիությունը, մատչելիությունը, որակը, ինչպես նաև ստորերկրյա ջրային ռեսուրսների մասնակցային և արդյունավետ կառավարումը:

Դիմող ՏԻՄ-երը կամ ՀԿ-ները պետք է ապահովեն գործընկեր համայնքների բնակչության տարբեր շերտերի հնարավորինս լայն մասնակցություն մոնիթորինգի աշխատանքներին: Եթե դիմորդը գործընկեր համայնքն է, ապա վերջինս պետք է ներկայացնի հստակ մեխանիզմներ, թե ինչպես է համագործակցելու քաղաքացիական հասարակության կառույցների հետ (ՀԿ-ներ, համայնքային ակտիվ խմբեր, երիտասարդներ, կանայք և այլն), իսկ եթե դիմորդը ՀԿ-է, ապա հստակ պետք է ցույց տա, թե Ծրագրի ո՞ր գործընկեր համայնքների հետ է իրականացնելու ծրագիրը: Դիմորդ ՀԿ-ները պետք է որպես գործընկերներ ընդգրկեն նաև Ծրագրի համայնքների մյուս դերակատարներին (ՀԿ-ներ և/կամ համայնքային ակտիվ խմբեր, երիտասարդներ, կանայք և այլն):

Մրցույթին մասնակցելու համար հարկավոր է ներկայացնել ծրագրային առաջարկ՝ ուղղված ջրային ռեսուրսների կառավարման և ջրօգտագործման մոնիթորինգին հետևյալ հնարավոր բնագավառներում՝ *ազատ ջրօգտագործման, ջրօգտագործման թույլտվությունների առկայություն, ջրամատակարարման տնտեսություն/գրաֆիկի ոռոգման ջրի հասանելիություն և արդարացի բաշխում, ջրախնայող տեխնոլոգիաների ներդրման արդյունավետություն, ջրօգտագործողների ընկերություն (ՋՕԸ) -ջրօգտագործող փոխհարաբերությունների վերահսկում /բարելավում, ջրօգտագործողների իրավունքների և պարտավորությունների, ջրի որակ, ճնշում, ոչ պլանային ընդհատումներ, կորուստներ և այլն:* Վերոնշյալ ուղղությունների ցանկը սպառիչ չէ և դիմորդները կարող են հայտարարված մրցույթի շրջանակներում առաջարկել նաև այլ ոլորտներին վերաբերող ծրագրերի գաղափարներ՝ :որոնք կնպաստեն Ծրագրի ընդհանուր նպատակի իրականացմանը:

## **ՃԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ**

Այս հրավերի շրջանակներում հնարավոր է տրամադրել առնվազն 5 (հինգ) դրամաշնորհ, եթե Ընտրող հանձնաժողովը համարի, որ դեիմորդի հայտը բավարարում է հայտամրցույթի

պահանջներին: Յուրաքանչյուր դրամաշնորհային ծրագրի իրականացման համար պահանջվող գումարի չափը **չպետք է գերազանցի 1 900 000 ՀՀ դրամը**, որը կարող է օգտագործվել ծրագրային և վարչական ծախսերի համար:

ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից համայնքային ծրագրի իրականացման համար տրամադրվող միջոցներից բացի, խրախուսվում է դիմորդների կողմից սեփական դրամական և/կամ ոչ դրամական միջոցների ներդրումը կամ այլ աղբյուրներից համաֆինանսավորումը (համայնք, մասնավոր աղբյուրներ և այլն): ԱՄՆ կառավարության տրամադրված ֆինանսավորումը չի կարող դիտարկվել որպես ներդրում:

Ընտրող հանձնաժողովի կողմից նախնական ընտրված ՏԻՄ-երի/ՀԿ-ներ ծրագրային աշխատակիցները պարտավոր են մասնակցել գործընկեր համայնքներում մոնիթորինգի իրականացմանը առնչվող սեմինար-պարապմունքներին, որոնք կազմակերպվելու են Ծրագրի կողմից: Սեմինար-պարապմունքներին մասնակցությունը նախապայման է վերջնական ընտրության համար:

Հաստատված ծրագրերի իրականացման ընդհանուր տևողությունը չպետք է գերազանցի 6 ամիսը:

## **ՈՎՔԵՐ ԿԱՐՈՂ ԵՆ ԴԻՄԵԼ**

- ✓ Արարատի և Արմավիրի մարզերի ծրագրի գործընկեր համայնքների համայնքապետարանները, օրենքով և իրենց կանոնադրությամբ սահմանված կարգով, որոնք պարտավոր են համագործակցել ՀԿ-ների և/կամ համայնքային ակտիվ խմբերի, երիտասարդների հետ: Խրախուսվում է նաև կանանց ներգրավումը: Դիմորդ համայնքապետարանները պետք է հստակ և հիմնավոր փաստարկներ ներկայացնեն, որ հայտը ներկայացնելու պահին ունեն պայմանավորվածություններ պահանջվող համագործակցության վերաբերյալ:
- ✓ Հայաստանի Հանրապետությունում գրանցված ՀԿ-ները, որոնք պարտավոր են համագործակցել ծրագրի գործընկեր համայնքների և/կամ այլ ՀԿ-ների, համայնքային ակտիվ խմբերի, երիտասարդների և կանանց հետ: Դիմորդ ՀԿ-ները պետք է հստակ և հիմնավոր փաստարկներ ներկայացնեն, որ հայտը ներկայացնելու պահին ունեն պայմանավորվածություններ պահանջվող համագործակցության վերաբերյալ:

## **Ուշադրություն**

Համայնքային և քաղաքացիական ծառայողները կարող են ընդգրկվել դրամաշնորհային ծրագրում, սակայն չեն կարող վճարվել Ծրագրի կողմից:

Մրցույթին մասնակցելու իրավունքը վերապահվում է միայն ծրագրի գործընկեր համայնքներին կամ ծրագրի գործընկեր համայնքների հետ համագործակցող ՀԿ-ներին:

Համայնքային ակտիվ և նախաձեռնող խմբերը, ինչպես նաև անհատները չեն կարող լինել դիմորդ, սակայն կարող են համագործակցել համայնքապետարանների/ՀԿ-ների հետ և համատեղ ներկայացնել ծրագրեր, որտեղ դիմորդը կարող է լինել համայնքապետարանը կամ որևէ համայնքապետարանի հետ համագործակցող ՀԿ:

Մրցույթին կարող են համատեղ մասնակցել ծրագրում ընդգրկված մի քանի համայնքներ՝ համագործակցելով այդ համայնքներից նախաձեռնող և ակտիվ խմբերի հետ և/կամ ՀԿ-ների հետ:

Մոնիթորինգն ավելի արդյունավետ անցկացնելու և հիմնավորված արդյունքներ ներկայացնելու համար դիմող կազմակերպությունը, կախված մոնիթորինգի առարկայից, կարող է ձեռքբերել չափող/հաշվող/հսկող պարզաարքավորումներ:

## **ԻՆՉՊԵՐՍ ԴԻՄԵԼ**

Դիմորդները պետք է ներկայացնեն գրավոր հայտ՝ համաձայն սույն հրավերի պահանջների:

- Հայտերը պետք է ներկայացնել հայերեն լեզվով ընթեռնելի տառատեսակով (Unicode/Sylfaen), 11 տառաչափով (font):
- Ներկայացված **հայտը պետք է ամբողջովին համապատասխանի այն պահանջներին**, որոնք շարադրված են ստորև ներկայացված Հայտի հրավերի ձևաչափում:
- Յուրաքանչյուր դիմորդ **իրավունք ունի ներկայացնելու միայն 1 (ՄԵԿ) հայտ**:
- Յուրաքանչյուր դիմորդ պետք է փակ և կնքված (դիմորդի՝ համայնքապետարանի կամ ՀԿ-ի կնիքով) ԾՐԱԸՈՎ ներկայացնի հայտի փաթեթի 1(ՄԵԿ) բնօրինակ տպագիր և էլեկտրոնային տարբերակով (արտագրված խտասկավառակի/CD-ի կամ USB կրիչի վրա): Հայտի բնօրինակը և էլեկտրոնային փաթեթները պետք է պարունակեն նույն բովանդակությունը:
- Հայտերը պետք է ներկայացվեն «Ջրային ռեսուրսների մասնակցային և արդյունավետ օգտագործում» ծրագրի իրականացման գործընկերներից «Ազգային ջրային համագործակցություն» ՀԿ գրասենյակ (հասցեն՝ ք. Երևան, Ուլնեցի 31, 4-րդ հարկ) մինչև սահմանված վերջնաժամկետը: Ծրարների վրա պետք է նշված լինի՝ «Հայտերի ներկայացման հրավեր/PURE Water»:

## **ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏԸ՝ 2018թ. մայիսի 25-ը, ժամը 17:00-ն:**

**ԿԱՐԵՎՈՐ Է**-Սահմանված ժամկետից ուշ ներկայացված հայտերը չեն ընդունվի, իսկ Հայտի հրավերում նկարագրված չափանիշներին/պահանջներին չհամապատասխանող հայտերը չեն դիտարկվի մրցութային հանձնաժողովի կողմից:

Ստացված դիմումներն ու կից ներկայացված փաստաթղթերը վերադարձման ենթակա չեն:

### **Հայտերի ընտրության ընթացակարգերը և չափանիշները**

Դիմորդները պետք է ներկայացնեն հստակ ծրագրային առաջարկ ըստ ստորև ներկայացված հայտի ձևաչափի, որը.

- Պետք է հիմնավոր նկարագրի ջրային ոլորտի կոնկրետ խնդրի մոնիթորինգի իրկանացման անհրաժեշտությունը:
- Պետք է լինի իրատեսական և բավարարի ավելի մեծ թվով շահառուների կարիքների բավարարմանը:
- Պետք է ստանա հանրային մեծ աջակցություն՝ ինչպես համայնքի բնակիչների, այնպես էլ ծրագրի շահակիր անձանց կողմից:
- Պետք է համապատասխանի ծրագրի առաջարկի ձևաչափին և անպայմանորեն համապատասխանի էջերի քանակի համար նշված սահմանափակումներին:
- Պետք է լինեն կենսունակ և շարունակական:

Դրամաշնորհներից յուրաքանչյուրի համար կստորագրվի պաշտոնական պայմանագիր, որում կշարադրվեն դրամաշնորհի պայմանները, ինչպես նաև կողմերի պարտավորությունները:

### **Հայտի փաթեթը պետք է ներառի հետևյալ փաստաթղթերը.**

- I. Տիտղոսաթերթ և առաջարկվող ծրագրի նկարագրություն՝ համաձայն առաջարկված ձևի
- II. Բյուջե, բյուջեի հիմնավորում
- III. Գանտի աղյուսակը/Ժամանակացույցը
- IV. Աշխատակազմի համառոտ ինքնակենսագրականները և պաշտոնի նկարագրերը
- V. Այլ փաստաթղթեր, որոնք կարող են ամրապնդել առաջարկի մրցունակությունը (օրինակ, տվյալ ոլորտում դիմողի փորձի/փորձառության, կարողությունների մասին հավաստող որևէ փաստաթուղթ):

### **Հայտերի ընտրության պայմանները, ընթացակարգը և չափանիշները**

- I. «Ջրային ռեսուրսների մասնակցային և արդյունավետ օգտագործում» ծրագրի կողմից կիրականացնի տեղեկատվական հանդիպում Երևանում, **2018թ.մայիսի 11-ին, հասցե՝ Ալեք Մանուկյան 9, Հայաստանի Ամերիկյան Համալսարանի Կենտրոն, 5-րդ հարկ, 501 սենյակ:**
- II. Ծրագրի հայտերի ուսումնասիրությունը և նախնական ընտրությունը կկատարի Ընտրող հանձնաժողովը (ԸՀ): ԱՄՆ ՄԶԳ ներկայացուցիչը/ներկայացուցիչները Ընտրող հանձնաժողովի նիստերին կմասնակցի/կմասնակցեն Դիտորդի կարգավիճակով:
- III. Հայտերը, որոնք կհամապատասխանեն սույն հրավերով սահմանված պահանջներին, կքննարկվեն և կգնահատվեն՝ համաձայն չափանիշների, որոնք ներկայացված են Աղյուսակ 1-ում:

IV. ԸՀ-ն իրավունք ունի լրացուցիչ պարզաբանումներ խնդրել՝ նախքան վերջնական որոշում ընդունելը:

**Աղյուսակ 1. Դիմումների գնահատման չափանիշներ**

Հ/հ	Չափանիշներ/Գնահատման միավորներ	Առավելագույն միավորը
1	Ծրագրի խնդիրները, նպատակը և ակնկալվող արդյունքները հստակ ձևակերպված են	50
2	Ծրագրի գործողությունները հիմնավորված են	15
3	Համապատասխան ոլորտում ունեցած կարողությունները (նման նախագծերի իրականացում)	15
4	Բյուջեն հիմնավորված է	10
5	Շահառուների թիվը	10
	Ընդամենը՝	100

**ՀԱՅՏԻ ՁԵՎԱԶՍՓ**

**I. Տիտղոսաթերթ**

Ծրագրի անվանումը	
Ծրագրի իրականացման վայրը և տևողությունը (սկիզբ/ավարտ)	
Դիմողի անունը/անվանումը	
Դիմողի կոնտակտային տվյալները	
Ծրագրի պատասխանատու անձի անուն ազգանունը	
Ծրագրի պատասխանատու անձի կոնտակտային տվյալները (հեռախոս, բջջ., ֆաքս, էլ-փոստ, վեբ.կայք)	
Գործընկեր ՏԻՄ-ի անվանումը (օր. Արարատի մարզի Բուրաստանի համայնքապետարան)	
Գործընկեր ՏԻՄ-ի՝ համայնքի ղեկավարի անուն ազգանունը	
Գործընկեր ՏԻՄ-ի կոնտակտային տվյալները (հասցե, հեռախոս, ֆաքս, էլ-փոստ, վեբ.կայք)	
ԱՄՆ ՄԶԳ-ից պահանջվող գումարի չափը (ՀՀ դրամ)	
Դիմողի համաֆինանսավորման/սեփական ներդրման չափը (ՀՀ դրամ), եթե առկա է	
Գործընկեր ՏԻՄ-ի/կազմակերպության ներդրումը, եթե առկա է	
<b>ԾՐԱԳՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՅՈՒՋԵՆ (ՀՀ դրամ)</b>	

**II. Առաջարկվող ծրագրի նկարագրություն (առավելագույնը 4 էջ՝ առանց կից փաստաթղթերի)**

**1. Հիմնախնդրի ձևակերպում և հիմնավորում.**

Ներկայացրեք այն կոնկրետ հիմնախնդիր(ները)ը, որը պետք է լուծվի ձեր կողմից առաջարկվող ծրագրի արդյունքում և հիմնավորեք հիմնախնդրի կարևորությունը (օրինակ՝ ներկայացնելով քանակական/որակական ապացույցներ, կարիքների գնահատում և այլն):

**2. Ծրագրի նպատակը և ակնկալվող արդյունքները.**

Նկարագրեք առաջարկվող ծրագրի նպատակները և ակնկալվող կոնկրետ չափելի արդյունքները, որոնց միջոցով ծրագիրը կծառայի իր նպատակին (նպատակներին): Ծրագրի նպատակներն ու ակնկալվող արդյունքները պետք է լինեն իրագործելի և չափելի:

**3. Նպատակներին հասնելու համար նախատեսված գործողություններ/ռազմավարություններ/մեթոդաբանությունը.**

Նկարագրեք այն գործողությունները, որոնք իրականացվելու են ծրագրի յուրաքանչյուր նպատակին հասնելու համար՝ նշելով և հիմնավորելով յուրաքանչյուր գործողության հաջորդականությունը և դրանց իրականացման համար նախատեսված ժամանակահատվածը: Խնդրում ենք կցված ձևաչափին համապատասխան ներկայացնել աշխատանքային պլան/Գանտի աղյուսակ:

**4. Շահառուները.**

Ներկայացրեք առաջարկվող ծրագրի շահառուներին, ովքեր կօգտվեն ծրագրի իրականացման արդյունքում՝ բացատրելով, թե ինչպիսի դրական փոփոխություններ տեղի կունենան նրանց կյանքում:

**5. Աշխատակազմ.**

Տրամադրեք տեղեկատվություն առաջարկվող ծրագրի շրջանակներում ընդգրկված լրիվ և կես դրույքով աշխատողների վերաբերյալ և ներկայացրեք յուրաքանչյուրի պարտականությունները՝ մասնավորապես նշելով առաջարկվող գործողությունների իրականացման համար պատասխանատու աշխատակիցների պաշտոնները և կարողությունները (կցեք աշխատակազմի հակիրճ ինքնակենսագրությունները և պաշտոնի նկարագրությունները՝ նշելով աշխատակիցների համապատասխան փորձն ու հմտությունները):

**6. Դիմորդի փորձն ու տեխնիկական կարողությունները.**

Դիմորդի համապատասխան փորձը (իրականացված ծրագրի (ծրագրերի) անվանումը և տևողությունը, համառոտ նկարագրությունը, ֆինանսավորող կազմակերպություն(ներ)ը (անվանում, հեռախոսահամար, էլ-փոստ, ներկայացուցիչ), գործընկեր կազմակերպությունները (եթե առկա են) (անվանում, հեռախոսահամար, էլ-փոստ, ներկայացուցիչ):

**III. Բյուջե և բյուջեի նկարագրություն**

Բյուջեն պետք է արտացոլի ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսները: Բյուջեի նկարագրությունը պետք է պարունակի մանրամասներ, թե ի՞նչ տիպի ռեսուրսներ են անհրաժեշտ, մեկ միավորի արժեքն ու գնի հիմնավորումը: Դրամաշնորհի թույլատրվող ծախսերը կարող են ներառել ծրագրային ծախսեր, սարքավորումներ, շինանյութ, անձնակազմի /համապատասխան տեխնիկական մասնագետ(ներ)/ և վարչական ծախսեր: Ծրագրի բոլոր ծախսերը պետք է շատ լավ հիմնավորված լինեն ծրագրի ընդհանուր արդյունավետության տեսանկյունից:



**Ծրագրային ծախսերը** ներառում են նախատեսված գործողությունների իրականացման համար կատարվող գլխավոր քայլերի հետ կապված ծախսերը: Դրանք ծրագրի իրականացման, միջոցառումների կազմակերպման, տպագրությունների, գրականության գնման, ուսուցման նյութերի, սեմինարի համար անհրաժեշտ պիտույքների, իրազեկության նյութերի պատրաստման (մամուլում տպագրությունների և հեռուստատեսությամբ լուսաբանումների նպատակով ֆինանսավորում **ՉԻ տրամադրվում**) և այլ ծախսեր են: Ծրագրի շրջանակներում ստեղծված յուրաքանչյուր նյութ պետք է լավ հիմնավորված և թիրախային լինի ինչպես բովանդակության, այնպես էլ ձևի և ընդգրկման ոլորտի առումով:

**Սարքավորումներ/գույք/վերանորոգում** ներառում են համակարգիչների, տպիչների և այլ գրասենյակային սարքավորումների գնման կամ վարձակալության ծախսերը:

**Անձնակազմը** ներառում է լրիվ ու կես դրույքով աշխատող անձնակազմի, ինչպես նաև ծրագրում ներգրավված փորձագետների աշխատավարձեր: Աշխատավարձ կարող է վճարվել ՄԻԱՅՆ առաջարկվող ծրագրի շրջանակներում կատարվող աշխատանքների դիմաց և աշխատակազմի հետ կապված ծախսերը պետք է լավ հիմնավորված լինեն:

**Վարչական ծախսերը** ներառում են ծրագրի իրականացման (հեռախոս, ֆաքս, ինտերնետ), տպագրական պատճենահանման (թուղթ, տոներ, ծրարներ և այլն) ծախսեր: Վարչական ծախսերը չպետք է գերազանցեն հայցվող բյուջեի **10%-ը**:

	Ծախսեր	ԱՄՆ ՄՁԳ-ից պահանջվող գումար (ՀՀ դրամ)	Համաֆինանսավորում (ՀՀ դրամ)	Ոչ դրամական ներդրում (ՀՀ դրամ)	Ծրագրի ընդհանուր գումարը
1					
2					
3					
	<b>Ընդամենը</b>				

**8.2 Բյուջեի նկարագրություն** (ներկայացրեք ծախսերի նկարագրությունը և հիմնավորումը (ոչ ավելին, քան 200 բառով)

**8.3 Ֆինանսավորման աղբյուր**

Աղբյուր	Գումարը ՀՀ դրամով	Ընդհանուր գումարի %-ը
---------	-------------------	-----------------------

Դրամաշնորհով վճարվող գումար		
Դիմորդի կողմից ներդրում		
Համագործակցող կազմակերպության ներդրում		
Այլ ներդրումներ		
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>		

Մրցույթին վերաբերող հարցերի դեպքում կարող եք դիմել «Ջրային ռեսուրսների մասնակցային և արդյունավետ օգտագործում» ծրագիր, «Ազգային ջրային համագործակցություն» ՀԿ, Նոննա Հովհաննիսյանին. [cwp.armenia.2017@gmail.com](mailto:cwp.armenia.2017@gmail.com) ;  
**011 209 603:**